ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 09

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

22.04.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Հ.Ավետիսյանը - մարզպետի տեղակալ
Կ.Աշրաֆյանը - աշխատակազմի գլխավոր քարտուղար
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Ա.Մատինյանը, Մ.Խեչումյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Մ.Սարգսյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Բեջանյանը, Գ.Բաղդասարյանը, Կ.Շեկոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Նախորդ խորհրդակցությունից հետո (01.04.2025թ.) Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների և անելիքների վերաբերյալ տեղեկատվություն:

(զեկ. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ)

2. Լոռու մարզպետի աշխատակազմի ոլորտային ստորաբաժանումների կողմից աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին ոլորտի զարգացման տեսլականի ներկայացման վերաբերյալ հաշվետվություն:

(զեկ. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ)

3. Ս/թ մայիսի 3-ին կայանալիք համապետական շաբաթօրյակի կազմակերպման և անցկացման հետ կապված հարցերի վերաբերյալ տեղեկատվություն:

(զեկ. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյան)

4. Այլ հարցեր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կ.Ադամյանը ներկայացրեց մարզպետի աշխատակազմում թափուր աշխատատեղերի համար հայտարարված մրցույթների, դիմորդների և մրցույթների ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվություն:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը ներկայացրեց տրված

հանձնարարականների (Լոռու մարզպետի աշխատակազմում մուտքագրված, ինչպես նաև արձանագրություններով տրված) կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:

3. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ՝ Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Գ.Բաղդասարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Կ.Շեկոյանը ներկայացրեցին ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

4. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Մատինյանը ներկայացրեց վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն, ինչպես նաև Ալավերդու թիվ 4 հիմնական դպրոցի՝ վերակառուցման առիթով տեղափոխման և 26.04.2025թ-ին նախատեսված «Քաղաքացու օրվա» միջոցառումների անցկացման վերաբերյալ տեղեկատվություն:

5. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացված շրջայցերի, այդ ընթացքում հայտնաբերված թերությունների և խախտումների, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ուղարկված սուբվենցիոն ծրագրային հայտերի և իրականացված շինարարական աշխատանքների համար նախատեսված վճարումների վերաբերյալ, ինչպես նաև 2024թ. մայիս ամսին տեղացած հորդառատ անձրևների հետևանքով Ալավերդի համայնքի բնակչությանը հասցված վնասների հետևանքով բնակարանային ապահովման հարցով ԲԳՎ-ների տրամադրման առնչությամբ առաջացած խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ մարզպետի հանձնարարությամբ քաղաքաշինական ծրագրերը գտնվում են ամենօրյա հսկողության ներքո և թերությունների հայտնաբերման ու արձանագրման դեպքում տրվում են համապատասխան ցուցումներ դրանք շտկելու և վերացնելու համար:

Մարզպետը հանձնարարեց .

1) 2-օրյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն Վանաձորի թիվ 19 և Ալավերդու թիվ 2 դպրոցներում իրականացվող շինաշխատանքների ընթացքի վերաբերյալ:

2) Համապատասխան գրությամբ դիմել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և ՀՀ փոխվարչապետին՝ Ալավերդի համայնքի աղետից տուժած բնակիչների բնակապահովման խնդիրների լուծման նպատակով ԲԳՎ-ների տրամադրման հարցով:

6. Մարզպետի աշխատակազմի հողաշինության բաժնի պետ Է.Հախվերդյանը ներկայացրեց ստորաբաժանման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, հայտնելով, որ արդեն իսկ ստացվել է քաղաքաշինական ոլորտի տարածական պլանավորման հատակագծերը բոլոր համայնքների վերաբերյալ (գլխավոր հատակագծեր), որոնք պետական գրանցում կստանան լիազոր մարմնի կողմից և կտրամադրվեն համայնքներին:

Մարզպետը հանձնարարեց մինչև 30.04.2025թ. զեկուցել նշված աշխատանքների իրականացման և ավարտի վերաբերյալ:

7. Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Գ.Մելիքսեթյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն, միաժամանակ հայտնեց, որ 25.04.2025թ-ին ժ. 11.00-ին նախատեսվում է Լոռու մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելություն Սպիտակ համայնքում:

Մարզպետը հանձնարարեց՝ մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանի համակարգմամբ պլանավորել քաղաքացիների ընդունելությունը:

8. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Ն.Թովմասյանը և մարզպետի օգնական Հ.Հակոբյանը ներկայացրեցին ըստ ոլորտների համակարգման իրենց կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

9. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանը ներկայացրեց ս.թ. մայիսի 3-ին նախատեսված համապետական շաբաթօրյակի կազմակերպման և անցկացման հետ կապված ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում անցկացված խորհրդակցության, տրված հանձնարարականների և դրանց կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն, նշելով, որ մարզի համայնքներից ստացվել են առաջարկություններ և տեղեկատվություն շաբաթօրյակի անցկացման վայրերի և դրանցում ազգաբնակչության և տեխնիկայի ընդգրկվածության վերաբերյալ:

Վերոգրյալի վերաբերյալ մարզպետը հանձնարարեց 1 օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն մարզային և մարզպետարանի ենթակայության կառույցների շաբաթօրյակին մասնակցության և տեղեկացվածության վերաբերյալ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել բոլոր կառույցների, կազմակերպությունների և բնակիչների ակտիվ մասնակցությունը շաբաթօրյակի աշխատանքներին ապահովելու ուղղությամբ:

10. Մարզպետը հանձնարարեց աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, մարզպետի օգնական Հ.Հակոբյանին.

Մինչև 28.04.2025թ-ը ներկայացնել ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ թվային հաշվետվություններ 01.04.2025թ. դրությամբ, նկատի ունենալով, որ տվյալ հաշվետվությունը քննարկվելու է ստորաբաժանման աշխատակիցների մասնակցությամբ մարզպետի կողմից և հաշվետվություններում անհրաժեշտ է ներառել նաև ոլորտային խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ:

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

Արծ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99